

ՎԵՆԱՐԱՍՈՒՄ



ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ

Սեպտեմբերի 27-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհարանի հանդիսությանց շքեղ դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր Շիստ՝ Ավիրված Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի գահակալության բանամյակին:

Վեհարանի հանդիսությանց դահլիճը լցվել էր հայ և օտար հոգևորականներով, պատգամավորներով, հյուրերով, ուստավորների բազմությամբ, ինչպես նաև մայրաքաղաքի գիտական, մշակութային, ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներով և արվեստագետներով՝ շուրջ 400 հոգի:

Հորելյանական սույն հանդիսությանը ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրությունների սովորության առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Հանդիսության բացումը կատարեց Երուսաղեմի հայոց պատրիարքարքանի դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի ու ընծայարանի վերատեսուչ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տ. Շահն արքեպիսկոպոս Ամենանը:

Այնուհետև հուտնկայս, խմբական արտասանությամբ ասվեց «Հայոց մեր»-ը, որին հաջորդեց ՀՍՍՀ պետական հիմնի նվազի կատարումը:

Վեհափառ Հայրապետի գահակալության բանամյակի առթիվ կազմված Կենտրոնական հորելյանական հանձնաժողովի անոնից առաջինը հանդես եկավ Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ տ. Եղիշե արքեպիսկոպոսը հետևյալ բովանդակալից և չերմ ուղերձով.

Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲՈՂԱՆ ՊԱՏՐԻՍ.ՐՔԻ ԽՈՍՔԸ

Հանդիսավոր գիտակցությամբ որուն խորքը հիացում նկազմե, հայ ժողովուրդը ամենուրեք իր հարգանքի տուրքը կրերե վերատին նորին Ա. Օծություն S. Տ. Վազգեն Վեհափառ կաթողիկոսին, Անոր բանամյա գահակալության հորելյանին առիթով:

Մեծ մարդոց հոգիին բացատրությունը պետք է որոնել հոգիին մեջ այն ժողովուրդին, որուն ծոցածին զավակներն են անոնք: Անշուշտ բարեպաշտ

մոր մը և ազնվական հոր մը հոգինս ստացած է արօրվան հոբելյարը Իր հոգիին կայծը, որ այժմ խարույկի է վերածվեր Իր մեջ, մեր ցավերուն և կարիքներուն իբրև ապեղանի և փարոս առաջնորդության: Մեծ մարդերը անձնավորյալ արտահայտություններ են իրենց ցեղին ու ժամանակին, առնեց կյանքի պատմությունը պետք է որոնել ոչ թե հովով մը թվականներու և



Ամենապատիվ տ. Եղիշե սրբազն պատրիարք Երուսաղեմի հայոց

ծանություններու մեջ, որոնցմենք կիյուսի կենագրություն մը, այլ լուսաբանության մեջ այն ճգնումներուն և շարժադիրներուն որոնք կԲատկամշեն անոնց ժամանակն ու միջավայրը:

Անոնք որ տակավ կրցին ճանշնալ նորին Սուրբ Օծությունը Իր իղձերու

անկեղծությանը մեջ և մեր ժողովուրդին խոր կարիքները, կզգան այժմ թե Լուսավորչի Ալոռին զահակալ ըլլալու իր ընտրությունը նոր թվականի մը առավոտը կրերեր հայ եկեղեցվո երկնքին ներք։ Այս մտածումը իր մեջ ոչինչ ունի պատրողական, վասնզի արդյունք է ոչ թե զգացումի՝ այլ սկզբունքի մը։ Այդ սկզբունքը այն համոզումն է թե, հանայնքներու շինության գործը կկարուի բարոյական ուժերու, որոնք երևան կուգան հոգեկան առաքինություններով հարուստ գործիչներու միջոցավ։

Հայության լավագույն օրերը կզուգադիմին միշտ իր բարոյական մեծության թվականներուն։ Այդ թվականներեն լուրաքանչյուրին վերև կասկառնի դեմքն ու աւունը տեսիլքով լեցուն մարդոց, որոնց մեջ կապրի Աստուծո հոգին, առաջնորդության ճշմարիտ ուժը։ Այդ հոգին բաժին մը կա Նորին Ս. Օծություն Վազգեն կաթողիկոսին մեջ։ Առանց այդ հոգին, ամեն օր մարդուն մեջ ապրող կենդանի տեսիլքին, մենք պատրանքի զոհեր ենք միայն։ Առանց այդ կենդանի շունչին մեր խոսքը բարբարականք է, իսկ մեր գործը անհմաստ շարժումներու տեսարան մը։

Նորին Սուրբ Օծությունը հոգիի և տեսիլքի մարդ է, մեր օրերու ամենեն պատկառելի և բացառիկ արժեք ներկայացնող դեմքը։ Անհատներու կյանքին մեջ քիչ անգամ կարելի է հանդիմիլ որ պատվու և դիրքի հառաջդիմությունը զուգընթաց քաղաք ըլլա զուտ անձնական արժանիքին հետ, ինչպես կհաստատվի Նորին Ս. Օծություն Վազգեն կաթողիկոսի պարագային։ Այս է պատճառը անտարակուսու որ իր կյանքը տեսարան մը ըլլակ ավելի փառք մըն է մանավանդ. զայն դիտելով մարդ հրճվանքեն ավելի կառրվի, այսինքն կաճի փորձառությամբ և հոգիով։ Անոնք մարդեր են, որոնք կրնան կարդալ անկեզ մորենինին վրա իրենց ժողովուրդին ճակատագիրը։ Որոնք կրնան լսել ձայնը որ զիրենք իրենց ժողովուրդի առաջնորդության կկանչեն։

Հասկացողության խոշոր տարրերություն մը կա անշուշտ արժեքի և արծանիքի ըմբռնումներուն միջև։ Առաջինը վիճակ մըն է, իսկ երկրորդը հավելյալ առաքինություն մը, որուն կարելի է տիրանալ կամքով և գիտակցությամբ։ Ծնիլ արքայորդի արժեք է անշուշտ, բայց այդքան միայն։ անոր բուն արժանիքը մարդ կունենա այն ատեն երը արժեքը կարենա վերածել արժանիքի։ Ահա թե ինչպես Նորին Սուրբ Օծությունը ավելի քան երեսուն տարիներ անձնազոհ հոժարությամբ նվիրելու ետք ինքզինքը կոչումներու ամենեն խորհրդավորին և ազնվականին, կրցած է բարձրանալ քահանայութենեն քահանայապետության, շնորհիվ իր անքասիր նկարագրին, իմաստության, հոգեկան կարողություններուն և արդյունավոր գործումներության։

Գործը քան տարիներ առաջ ստանձնեց Նորին Ս. Օծությունը, դյուրին չեր։ Բոլորս ալ գիտենք թե Աթոռները փառապանձ գամեր ըլլակ ավելի խաչեր են։ Դժվարությունները շատ հաճախ այնքան մեծ են, որ հրաշքներու պեսք կա զանոնք դիմակալելու։ Սակայն ազգին վստահությունը առաջին մեկ օրեն աֆնքան մեծ եղավ իր սիրելի Հայրապետին նկատմամբ, որ սիրով պահանջեց որ գործվի այդ հրաշքը։ Մայր տաճարի նորոգությունը, Վեհարանի բարեգարդումը, ճեմարանին և տպարանին տրված նոր թափը և Մայր Աթոռի տնտեսական վերականգնումը առէններ եղան հրաշքի այդ թեզանին։

Սպերներեն վերականգնող նորափետոր մայր հայրենիքի կողքին Նորին Ս. Օծությունը գիտցավ շինել, զարդարել և ծաղկեցնել Մայր Աթոռը և Եշմիածինը։ Հայ ժողովուրդը անցնող հիսուն տարիներուն արքայական պատմուման հազցուց ավերներու մեջ դարերէ ի վեր նատած սգավոր մայր

հայրենիքին, իսկ Վազգեն կաթողիկոս այդ պատմուանը հագցուց և Էջմիածնին: Անոնք, այդ հավերժական զուգ մայրերը, թօթափած իրենց դարավոր փոշին, այժմ իրարու կմային քաղցր ժախտով, խրած սրբազն դառնել վշտի և թշվառության կոկորդին:

Նման եռամեծար հայրապետաներուն, Նորին Ս. Օծության համար Հայոց հայրենիքն ու ծողովուրդը անշամանդաղ ճշմարտություններ են, որոնց պետք է միշտ հավատարիմ մնալ ի գիտ ամեն զոհողության: Իսկ հայ եկեղեցին անհանանջ դրոշ մըն է, Լուսավորչի կամթեղը որ կրուավորե մեր անցյալի սիրագործությունները, ինչպես նաև ապագա վաղորդայինները: Այս մտաւուիլ մղումն տակն է որ Ան գործեց քանին ավելի տարիներ, եռանդով, սիրով և հավատարմությամբ, իրքն արժանավոր պետը հայ եկեղեցին:

Տակավին, հովկապետի գավազանը առած քանի անգամներ, Նորին Ս. Օծությունը շրջած է աշխարհն աշխարհ, գաղութն գաղութ, օրհնելով, ափոփելով և հրահանգելով աշխարհացրիվ Եր հոտը և Էջմիածնի և վերածնող մայր հայրենիքի գացցումովն ու գաղափարովը: Այդ զուգ գգացումներու ուկի գետն է որ կրուեցն Ան, տարիներն ի վեր, արտապահմանի մշուշներուն հաստած Եր պահուիստ գավակներու հոգինն ենք:

Ի վերջո պետք է գիտնանք թե և Էջմիածնին ոչ միայն բարձր բերդն է հավատքին, այլ նաև ուկի կամուրջը հայ ափուոքի և մայր հայրենիքի միջև: Սրբազն տապանակը որուն մեզ տակավին պահված կմնա հազար անգամ նահատակված բայց հավերժ կենդանի ծողովուրդի մը հոգնոր միխթարության և հավատքի մուրհակը: Ան մեր դարավոր մութերը լուսավորող փարոսն է եղած, մեկ ուրիշ երեսը մեր հայրենիքին ու ծողովուրդին: Ամեն անգամ երբ աղեսները հարվածեր են մեր մեկ երեսը մենք մյուսն ենք դարձուեր, մշտնշենավորելու մեր ազգային գոյությունը: Առանց և Էջմիածնի, մեր ծողովուրդի հոգևոր երեսին, շատ բան պիտի պակսեր մեր կյանքեն և մեր ծողովուրդի ապագա սիրագործություններեն: Զիս ատեղծագործություն, մեշն ըլլալով նաև գեղեցիկ տիեզերքին, եթե անոր կպակսի հոգեկան տարրը որ կրոցավառն զայն իր հոգին ոիթուովը:

Դժվար է անշուշտ արժանիքներու համեմատական կշիռ կազմել, սակայն մարդիկ մեծ են համաձայն իրենց ճգույններուն: Անոնք որ կիսիզախն իրենց անձին համար, իրենց անձը կարժեն. անոնք որ կպայքարին ի խնդիր աշխարհի ցուրթական բարիքներուն, աշխարհը կգտնեն լոկ. իսկ անոնք որ կձգտին իրենցմն անդին, հավիտենական ու համայնական ճշմարտություններուն, մեծագույններն են մարդոց որդիներեն, որոնք գիտեն մարդոց բերել կատիլ մը լուս և ափ մը բարիք, ամոքելու անոնց կիզիչ պատրը:

Վեհափառ Տեր, թույլ տվեք որ հանուն հայ եկեղեցվո լրության, պաշտոններյան և ծողովուրդին, շնորհավորեն Ձեր գահակալության քանամյակը, մաղթելով ի սրտե որ աստվածային օրհնությամբ տակավին երկար ապրիք, իրքն իմաստուն դիտապետ և ժիր մատովակը մեր եկեղեցին: Ապրիք երկար, իրականացնելու ոչ միայն Ձեր իղձերը, այլ նաև որպեսզի տեսնեք իրականացնում մեր ծողովուրդի դարավոր երազին:

Ողորմած Աստված մեր հայրերուն թող միշտ անսասն պահե Լուսավորչի գահը, ինչպես նաև սովետական մեր հայրենի աշխարհը. թող իր վրայեն չանցնի բնավ և թեր չարիքին, և իր կողերուն չծանրանա բռունցը բռնակային: Զավակսի թող իր հողերեն հայ բազուկը շինարար, իր գործարաններեն ձայնը աշխատանքի ուկի մուրճին: Առատ ըլլան միշտ հնձաննե-

որ բարիքին և բացվի ժպիտը երշանկության հոգիներուն մեջ, որպեսզի կարենանք ըսել մեր սիրտերու խորեն։ Ովսաննա նորանորոգ հարուցելովն մեր եկեղեցին և հայրենիքին։

Հորեւար Հայոց կաթողիկոսի քանամյա գործումեռությանը նվիրված Գերագույն հոգևոր խորհրդի գեկուցագիրն ընթերցեց առ Կոմիտաս արքեպիսկոպոսը (Սույն գեկուցագիրը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 12):

Վեհափառ Հայրապետի գահակալության քանամյակի առիթով Գերագույն հոգևոր խորհրդը պատրաստել էր տվել ականակուու և ուլենառով Հայրապետական Արծիվ պատվանշանը՝ հանուն մեր սուրբ եկեղեցու և համայն հայ ժողովրդի, իբրև որդիական երախտագիտության և հավատարմության արտահայտություն։ Պատվանշանը հետևյալ գեղեցիկ գրաքար ձունուղերձով մատուցվեց Վեհափառ Հայրապետին։

«ԱՍՏՈՒՄԱՐԵԱԼ ԵՒ ՍՐԲԱԶԱՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՏԵԱՌՈՒ ՏԵԱՌՈՒ ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅՑ

Վեհափառ Տէր,

Յայտ առնենք Սրբութեան Ձերոյ, եթէ Գերագույն Խորհրդը աստուածակառոյց Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի, խորհրդը ի մէջ արարեալ, անդամաց գեկեղեցաշէն, հայրենամուլք և յոգնաջան գործն շնորհազարդ Հովուապետի Ամենայն Հայոց։

Յաւուրս քանամեայ վեհաշուք գահակալութեան մեծի Քահանայապետի, Եկեղեցի Հայաստանեայց, որ խորհնացեալ էր ի բարեզարդութեան քեմքին, յոյժ պայծառացաւ և բարձրագույն կամակարութեամբ երևելի եղև յաշխարհին և յազգին մերում։

Վասն որոյ Գերագույն Խորհրդը Սայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի, ի տրիտոր աստուածահանոյ գործոց Եպիսկոպոսապետի Ամենայն Հայոց, այլև ի Եշանաւորումն քանամեայ գահակալութեան Ծավյագոյն Պատրիարքի և Կաթողիկոսի, սահմանեաց շնորհել մեծագործ Գահակալի մեծի Աթոռոյս և Հովուապետի, զականակուու և գրսկեհուու զԱրծոյի Հայրապետական, յովուցեալ հայրենի թնօք, յանուն մերս Սրբոյ Եկեղեցու և համայն ժողովրդեան Հայոց։

Վեհից Վեհագոյն, ընկա՛լ քաղցրութեամբ զայս լպարգևս սրբանուլք, որ լվակը է Մեծի Հօրդ, քանզի Դո՞ւ ևս Հովի քաջ ևս իմաստուն քրիստոսահիմն Եկեղեցու և Քեւ պարծին Եկեղեցի Հայաստանեայց ևս ամենայն ժողովրդն Հայոց։

«Թագաւոր երկնաւոր, գեկեղեցի քո անշարժ պահեա, ևս զգաւազան իշխանութեան մերոյ Հայրապետի, պայծառացուցեալ ծաղկեցո՛ յամայր ամս»։

ԱՆԴԱՄՔ ԳԵՐԱԳՈՅՑ ՀՈԳԵԽՈՐ ԽՈՐՀՈՂՈՅՑ

ՊՐՈՖ. ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՊՐՈՖ. ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻԲԵԱՆ

ԿՈՄԻՏԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԴՈԿ. ՍԱՐԳԻՒ ՄԵԼԻՔՍԵԹԵԱՆ

ԾԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԴՈՑԵՆՏ ՑՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՓՈՒԶԵԱՆ

ՑՈՒՄԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Սայր Աթոռ սուրբ Էջմիածն,

27 մայսենի 1976 թ.»:

Գերագույն հոգևոր խորհրդի սովոր ձուռողբարձր հանդիսավորությամբ ընթերցեց տ. Շահն արքեպիսկոպոսը, որից հետո, բոլոր ներկաների սրտագին ծափողջույնների տակ, տ. Սերովի արքեպիսկոպոսը Վեհափառ Հայութաւին հանձնեց վերոհիշյալ պատվանշանը՝ զարդարելով Նրա կուրծքը:

Ապա Հայաստանի կառավարության և ՀՍՍՀ Մինիստրների սովորին առջեթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի անունից ողջունի և շնորհավորակի խոսքով հանդես եկավ խորհրդի հայսագահ տիար Սարգիս Գառապարյանը (Սույն ողջունի խոսքը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 9):

Տապ դուք ընդմիջումից հետո ողջունի և շնորհավորակի հետևյալ շերմ խոսքերով հանդես եկավ Կ. Պոլսի հայոց տ. Շնորհք պատրիարքը՝ հանուն հայ եկեղեցու նվիրապետական Աթոռների և բոլոր թեմերի:

S. ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՑՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,

Սրբազն ու հարգարժան հանդիսականներ,

Ցնծության մեջ է համայն հայությունը, որ գիտե, թե մենք, այսինքն Ցնծության մեջ է համայն հայությունը և անպաշտուն ներկայացուցիչները, հայ պաշտոնական պատվիրակները և անպաշտուն ներկայացուցիչները, հայ վարչական ենք այսօր այստեղ, հայրենի երկինքին ներքն, ու հայրապետական այս երդիքի տակ ու կտոնախմբենք հանդիսավոր իրադրության մեջ, Զեր Ս. Օծության գահակալության 20-ամյակը:

Այս ցնծատոնին մենք կրերենք ամենեն առաջ սրտաբուխ սիրո տուրքը համայն հայ թեմերու և իրենց ժողովորդին: Ու այդ սիրո սրտագին տուրքին կմիացնենք ամոնց որդիական ամենաշերմ շնորհակալությունները և հավատարմական զգացումները, իբրև արգադիր նվեր, ու կմատուցանենք զանոնք Զեր գահակալության բանամյակի այս երշանիկ տոնախմբության առիթով:

Արժանապես ու լրիվ ի հանդես բերվեցան արդեն Զեր Ս. Օծության հայրապետական 20 տարիներու իրագործումները. Անրկայացվեցաք իբրև շինարար ու ժողովորդանվեր կաթողիկոս Ամենայն Հայոց. հետևաբար մենք այդ մասին չե, որ պիտի անդրադառնեք. բայց պիտի չկրնանք չնիշեն գեթ անցողակի և համառոտիկ երեք երևույթներ, որոնք մեր համոզումով կկազմեն կարևորագույն երեսները Զեր Սրբության բազմաբեղուն կյանքին ու գործին, որոնք սերտորեն կապ ունին նաև մեր նվիրապետական Աթոռներու և թեմերու հետ:

Առաջինը Զեր հոգևոր հոտին բացվելու և բաշխվելու տրամադրությունն է: Դուք եղաք այն բացառիկ ու երշանիկ հայրապետը, որ չմնաց իր փղոսկըրյա աշտարակին մեջ, այլ դուրս եկավ ամենեն շփման մեջ մտնելու համար իր ժողովորդին հետ գրեթե ամենուրեք: Դուք մոտեցաք ամենքին ու մոտեցուցիք Մայր Աթոռու ամենքին: Դուք իբրև բարի հովվապետ համախ ճգեցիք Զեր հոտի 99 տոկոսը իր խաղաղ ու ապահով արտավալյրին մեջ, գացիք անձամբ փնտրելու կորուստի վտանգին մատնված հատվածը Զեր հոտին: Գտաք զայն ու մանավանդ գտնվեցաք անկե: Սիրեցիք ամենքը և սիրվեցաք ամենքն, ու Զեր հայրական սիրո ճառագայթումով միմիթարեցիք և սրտապնեցիք զանոնք: Եվ օստար ջուրերու մեջ խապա չկորսվելու գաղտնիքը պարզեցիք անոնց, հորդորելով, որ իրենց հայացքները շարունակ հանած պահեն Մայր Աթոռ և Էջմիածին և անով մարմնավորված սրբություն-

Աերուն: Երախտապարտ է արդարն արտասահմանի հայությունը Զեր այս հայրական հոգածության ու հայրապետական հետաքրքրության համար:

Բաշխեցիք Զեր հայրապետական օրինությունները, կոնդակներով ու ս. Գրիգոր Լուսավորչի շքանշաններով, ոչ միայն Մայր Աթոռի բարերարներուն, նյութական նվիրատուններուն, այսինքն մտքի ու գեղարվեստի մշակներուն, որոնք ամբողջական նվիրատուններուն, այսինքն մտքի ու գեղարվեստի մշակներուն, որոնք ամբողջական նվիրումով, հաճախ առանց փողի և թմրուկի, կծառայեն մեր դպրության և հայ մշակույթի այլ մարզերուն մեջ:

Երկրորդ կետը, զոր կուգենք ընթացել այս երջանիկ առիթով, Մայր Աթոռի ամբողջական վերականգնումը և նյութական վերաշինությունն է: Ավելորդ կնկատենք թվել փաստերը մի առ մի: Քարերը կաղաղակեն արդեն այդ մասին: Ու Մայր Աթոռի ընդհանրական նյութական այդ վերելքը մարմնավորված ու խորհրդանշված է վերանորոգյալ Վեհարանի այս հոյակերտ կառուցին մեջ, որ պատիվ կրերեն ունէ եկեղեցին: Մենք հույս մեծ ունիմք, թե Մայր Աթոռի նյութական այս վերանորոգչական գործին պիտի հաջորդէ Հայց. եկեղեցի վարչական մեքենականության վերանորոգությունը, իր մայր կանոնագիրով ու եկեղեցական կանոնագիրով:


Երրորդ կետը, որուն կուգենք անդրադառնալ ու շեշտել անոր կարևորությունը, նոր Կտակարանի արևելահայ բարերարի թարգմանությունը և հրատարակությունն է Մայր Աթոռի տպարաննեն:

Մարդիկ ընդունին կամ ոչ՝ մեր հավատքը և համոզումը կմնա անխախտ, թե նոր Կտակարանը աշխարհի Գերագույն Գիրքն է: Մարդկության վրա ամենն բարերար ու դրական ազդեցությունը ներգործող Մատյանն է: Եթե հանուն Ավետարանի գործված են նաև երբեմն մեղքեր կամ եղած են չարաշահություններ, մեղավորը Ավետարանը չէ, այլ ամկատար մարդը, որ հաղորդ չէ եղած Ավետարանի ոգիին և տառին: Նոր Կտակարանի մեջ հայտնվածն ավելի բարձր ճշմարտություն չէ տրված մարդկության. «Աստված սեր է». կամ «Աստված Լույս է. Անոր մեջ խավարի ոչ մեկ հետք կա» պատգամված է անոր սրբազն էշերուն մեջ, իրու բարձրագույն ճշմարտություն: Նոր Կտակարանի բարողածնեն ավելի բարձր բարոյական չէ ավանդված մարդերուն. «Սիրե ընկերոջ անձիդ պես». կամ «Ըրե ընկերոջ այն, ինչ որ կուգեն, որ ընկերոյ ընեն քեզի»: Ասուր կկազմեն կորիզը և համադրությունը Ավետարանի ընկերային բարոյականին, որ եթե գործադրվի, ինքնին պիտի վերնան աշխարհն պաղ կամ տաք բոլոր պատերազմները և բոլոր անհրարությունները. վերջ պիտի գտնեն բոլոր անհավասարությունները և ընկերային շահագործումները: Հետևաբար Ավետարան հրատարակել՝ կնշանակել ծառայել համամարդկային արդարության ու ճշմարտության դատին:

Բաց աստի, խաղաղությունը, որ մարդկային ազգի գերագույն բաղդանը և բարիքն է, ուրիշ ոչ մեկ գրքի մեջ այնքան կարևորություն և շեշտ ստացած է, որքան Ավետարանի էշերուն մեջ. հետևաբար զայն հրատարակել ու տարածելը՝ կնշանակել ծառայել նաև խաղաղության դատին:

Զեր Վեհափառության օրով ու գլխավորությամբ հրատարակված Ավետարանը կմնա Զեր Ս. Օծության կոթողական գործերեն մեկը: Մենք մեծ գոհունակությամբ իմացանք, որ արդեն իսկ պատրաստված է Ավետարանի արևմտահայ աշխարհաբարի թարգմանությունը և մոտ օրեն լույս կտեսնե արտասահմանի մեջ: Այս իրողությունը կաերշնչե մեզի այն հույսը և վստա-

Բովյունը, թե Նոր Կտակարանի ամբողջական հրատարակության պիտի հաջորդեն նույնքան և ավելի կարևոր հրատարակությունը ամբողջ Աստվածաշունչին, իր գործաքար ու աշխարհաբար ձևերուն մեջ: Ասիկա պիտի լինի Զեր Ս. Օծության բազմարդյուն գործունեության պատճեն:



Ամենապատիվ տ. Շնորհիք սրբազն պատրիարք Կ. Պոլսի

Աստվածաշունչի հրատարակությունը, բացի իր կրոնաբարոյական բարձր նպատակեն, պիտի ունենա իր քովնությունները հայ դպրության ու մշակույթին ընդհանրապես և հայ լեզվանության մասնավորաբար:

Ծանոթ է, թե մեր գրաբար Աստվածաշունչը առաջին գործը և գլուխ-գործոցն է հայ գրավոր դպրության: Մեր դասական լեզվի գրեթե ամբողջ բառագանձը համադրված է անոր մեջ: Այնուեղ է մեր զուգ աշխարհիկ բարբառներու մայրը, մեր գրաբար լեզուն, իր ուկեղենիկ փառքին ու վսեմ պարզության մեջ: Հետևաբար խոշոր ծառայություն մը պիտի լինի մեր մտավորականության և հայ դպրության՝ Աստվածաշունչի գիտական գրաբար հրատարակությունը և անոր ճշգրիտ թարգմանությունը:

Զեր Ս. Օծության նախաձեռնությամբ ի գլուխ հանված մեր պատմական բազմաթիվ տաճարներու հյութական նորոգչական գործերը մեզի կներշնչեն այն հույսը, թե ասոնց պիտի հաշորդեն վերանորոգչական աշխատանքները նաև մեր եկեղեցիկ բարոյական հորինվածքին վրա, ծիսական, արարողական ու ժամայաշտական մարզերուն մեջ. որովհետև ասոնք ալ կկարուտին պարբերական վերանորոգության կամ բարեզարդման, ինչպես մեր հյութական տաճարները. որովհետև անոնք ալ ենթակա են ժամանակ-ներու եղծիչ ազդեցության, ինչպես եղած են մեր քարեղեն կառուցները:

Թող ներվի ինձ, Վեհափառ Տեր, վերադառնալ պահ մը իմ իսկական հանգամանքին, իբրև պատրիարք հայոց Թուրքիո, ու այս անգամ թարգման հանդիսանալ նաև իմ ժողովորդիս գգացումներուն մասնավորաբար:

Մենք այս ցնծատոնին, պահինքն Զեր անձին հանդեպ երախտիքի արտահայտության այս հանդեսին, նախ կրերենք պարզուկ սերը և անսահման հվիրումը Թուրքիո հայության այն հաստվածին, որ ցրված է գավառներու հեռավոր մենության մեջ ու կապրի մնացորդացի իր սրտմաշուր օրերը: Սառնք գրեթե մոռցած ու մոռնալու վրա են այն ամենը, որոնք անհրաժեշտ են ժողովորդներու կենսունակության և տևականացնան համար. բայց անոնք առնվազն կապահեն դեռ հիմնական երկու խարիսխները իրենց գոյության. նախ հայ ծնած ըլլալու գիտակցությունը. և ապա՝ մայր եկեղեցիի, և անով՝ Մայր Աթոռի զավակ մկրտված ըլլալու համոզումը: Կրերենք ապա որդիական խորունկ ու խանավառ սերը Թուրքիո հայության մյուս մեծ զանգվածին, որ ամփոփված է Վուսիրի զուգ ափերուն վրա. ըստ կուզենք խթանպուղահայության, որ երբեմն կերպունը և կառավարող եղած էր ամբողջ արևմտահայության: Որքան ալ կապրի ան այսօր իր հվազման օրերը, գրեթե ամեն մարզի մեջ, մեկ քան սակայն չեն հվազած այնուեղ. այդ հարումն ու հավատարմությունն է մեր կրոնական սրբություններուն, ու այդ սրբությունները մարմնավորող Մայր Աթոռին և անոր Գահակալին՝ Ամենայն Հայոց Հայրապետին հանդեպ:

Պոլս հայության տարեգրության ու ժամանակակից սերունդի հիշողության մեջ անշնչեղի պիտի մնա Զեր Ս. Օծության պատմական այցելությունը պատմական այս քաղաքին: Ուստի անոնց որդիական կարուտի և խոր հարգանքի գգացումներուն կմիացնենք նաև անոնց անմար հույսը, թե օրին մեկը պիտի ստեղծվին ավելի բարեբատիկ պայմաններ, երբ անգամ մը ևս պիտի ապրին անոնք երշանկությունը Ամենայն Հայոց Հայրապետը իրենց մեջ ունենալու:

Մենք ամենք պիտի աղոթենք Վեհիդ թանկագին կյանքին արևշատության համար: Պիտի աղոթենք Զեր մշտական ու տոկուն քաջառողջության համար, որպեսզի Հայց առաքելական եկեղեցին ու հայ ժողովորդը երկար վայելին Զեր շինարար ու բարեբար հայրապետությունը: Պոլս շրջանակներու մեջ հաճախակի գործածված ծանոթ քացարությամբ մը՝ անպակաս

ըլլա Զեր շուքը մեր գլուխեն: Ու աստվածային և երկնային շնորհը շարունակե առաջնորդ ու հովանի հանդիսանալ Զեր Ս. Օծույթան՝ իբրև հրեղեն պուն խավար գիշերներուն ու իբրև հովանավոր ու զովարար ամա կիզիշ ցորեներուն: Եվ շնորհեսցե մեզ Տեր՝ Զեր Սրբությունը՝ ընդ երկայն ավորու ուղիղ վարդապետությամբ ու քաջ հովվապետությամբ:

Այնուհետև ողջույնի և շնորհավորանքի խոսքերով հանդեն եկամ Տ. Պիմեն Պատրիարքը՝ հանուն ուսու պրավոլավ եկեղեցու և սուրբ Սիմոնի, Տ. Դավիթ և Պատրիարք-կաթողիկոսը՝ հանուն վրաց օթողոքս եկեղեցու, Տ. Բասիլիոս Մար Թոնա Մատթեոս Ա. կաթողիկոսը՝ հանուն հնդիկ մալարար ուղղափառ եկեղեցու, կարդինալ Ժան Վիլլերանդարը՝ հանուն հովունական կաթողիկ եկեղեցու և Պողոս Զ Պապի, Լոնդոնի տ. Զերալդ Ալեքսանդր Լիխոն եպիսկոպոսը՝ հանուն անօղիկան եկեղեցու և Քենտրոնի արքեպիսկոպոս դոկտ. Ֆրեդերիկ Կոդանի, տ. Գերմանոս Մամայի միտրոպոլիտը՝ հանուն Երոսաղեմի հունաց պատրիարքության և Տ. Բենեդիկտոս Պատրիարքի, և տ. Մատթիլդ Սակի վարդապետը՝ հանուն Երուսաղեմի կայուլիկ ֆրանչիսկյան միարանության:

S. ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Զերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս, Ամենայն Հայոց Մայրագոյն Պատրիարք-կաթողիկոս Վազգեն Ա,

Բարձրապատիկ Հովվապետներ և Հովիվներ Հայաստանյաց առաքելական եկեղեցու,

Թանկագին Եղբայրներ ու քույրեր,

Հարգելի հյուրեր.

Մեր սիրութ նորից լցված է ուրախությամբ դեպի ամենայն հայոց հոգևոր կենտրոն սուրբ Էջմիածին կատարած Մեր անմոռանալի այցելությամբ, հայ եկեղեցու իմաստուն և բարի Հովվապետ Նորին Սրբություն Վազգեն կաթողիկոսի և նրա բոլոր գործակիցների հետ Մեր ունցած Եղբայրական ոգեշնչող հարաբերությամբ:

Այս անգամ Մեզ այս օրինյալ երկիրը բերեց Մեր հոգու և սրտի մղումը, որպեսզի հաղորդենք Զեզ, Զերդ Սրբությանը, ուսու պրավոլավ եկեղեցու բարձրաստիճան ներկայացնությանը Զերի, հոգևոր դասի և հավատացյալ ժողովրդի արտագիտ ողջույնները Զեր հովվապետական 20-ամյա արդյունաշատ գործունեության առթիվ:

Բերելով Մեր Եղբայրական ողջույնները, միաժամանակ հույս ենք հայունում և աղոթում, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը բազմապատկի Զերդ Սըրբության ուժերը՝ հետագայում ևս ծառայելու հրա ամենասուր անունին և Հայաստանյաց մեծ եկեղեցուն:

Գտնվելով ձեր հինավորց և օրինյալ երկրում, Մենք մտքով գնում ենք դեպի այն հեռավոր ժամանակները, երբ հայ ժողովրդի մեջ նոր էր ծագում քրիստոնեության հավատքի արշալույս առաքելական քարոզչության միջոցով, որով Ակիզբը դրվեց Քրիստոսի Ավետարանի տարածմանը Հայաստանում: Մենք վերհիշում ենք սուրբ Գրիգոր Լուսավորչի թափած զանքերը, ինչպես նաև հայ ժողովրդի և հրա եկեղեցու անցած պատմական տաժանելի ուղին:

Հայաստանյաց առաքելական եկեղեցին միշտ էլ եղել է հայ ժողովրդի

կողքին, երբ նա ծանր փորձություններ է կրել: Հայ եկեղեցու հեղինակությունը իրոք որ շատ մեծ է ոչ միայն մեր հայրենիքում, այլև ամբողջ աշխարհում: Դրա վկայությունն է այս հանդիսավոր ժողովը, որի մասնակից-



Նորիզ Մրրություն Տ. Պիմեն Մրրազան Պատրիարք Մոսկվայի և Բամայն Ռուսաստանի ների թվում Մենք տեսնում ենք քրիստոնեական մյուս եկեղեցիների հարգարժան ներկայացուցիչներին, որոնք եկել են կիսելու հայ հավատացյալ ժողովորի այս երջանիկ հանդիսության ուրախությունը:

Ուս պրավոլավ եկեղեցին հատուկ հարգանք ու սեր է տածում դեպի հայ առաքելական հնադարյան եկեղեցին: Սշխարհագրականորեն մենք մտտիկ ենք իրար, մեր ժողովուրդների ճակատագրերը սերտորեն շաղկապ-

ված են միմյանց պատմականորեն, մենք միակամ ենք ավետարամական ուստումքի հաստատման մեջ, իրաք ինու ունեցած մեր բարեկամական հարաբերության, դեպի մեր մերձավորները տածած ծառայական սիրո, երկրի վրա խաղաղության գործի ամրապնդման և մեր սովորական մեծ պետության բարիքների բազմապատկման մեջ:

Մենք վատահություն ենք հայտնում, որ Մեր այս այցելությունը ավելի ևս կամրապնդի եղբարական սրտագին սիրո կապերը մեր սուրբ եկեղեցիների միջև:

Ձերդ Սրբություն, թույլ տվեք Մեզ ուս պրավուլավ եկեղեցու անունից մեկ անգամ ևս սրտագին ողջունել Ձեզ այս նշանակալից օրվա առջիվ, շերտորեն շնորհավորել Ձեզ Ձեր սրբազն հոբելյանի կապակցությամբ, միաժամանակ ողջունել Հայաստանյաց առաքելական եկեղեցու եպիսկոպոսաց և ամբողջ հոգևոր դասին, ինչպես նաև հավատացյալ ժողովորին, որ ի Հայաստան և ի սիրուս աշխարհի:

Մենք հայտնում ենք Ձերդ Սրբությանը Մեր սրտագին շնորհակալությունը Ձեր սիրավիր ու առատաձեռն հյուրափրության համար և ամբողջ հոգով մաղթում Ձեր գլխավորած եկեղեցուն հետագա ծաղկում, իսկ անձամբ Ձեզ՝ քաջառողջություն, աստվածատոր ուրախություն և հաջողություն Ձեր բոլոր հետագա ձեռնարկումների մեջ:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսը երկար տարիներ պահպանի Ձերդ Սրբությանը բարեհաջողությամբ:

ՎՐԱՑ ՕՐԹՈԴՈԽՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԴԱՎԻԹ Ե-Ի ԽՈՍՔԸ

Այս է որդին, որ ստեղծեց Աստված:

Ժառանգորդ Հիսուսի, համազոր հրեշտակների:

Ամենայն Հայոց Հայապետ Վազգեն Առաջին:

Այս օրը հայ եկեղեցու համար բախտավոր մի օր է, որովհետև Դուք կարողացաք քանի տարիների Ձեր ստեղծագործ աշխատանքներով պատիվ բերել ենան:

Այսօր, երեկ և նախանցյալ օրն իմ սիրտը լի էր ուրախությամբ: Համայն Վրաստանը ողջունում է Ձեր գործունեության 20-ամյակը:

Վրաց եկեղեցին քրիստոնեական եկեղեցու հնագույն Աթոռներից մեկն է: Ո՞չ օսմանցիները և ո՞չ պարսիկները չկարողացան մեր աշխարհից շնչել քրիստոնեությունը:

Ձերդ Սրբություն, մեր երկու եկեղեցիների և ժողովուրդների բարեկամությունը շատ հին է և սերտ: Ոչ մի ուժ աշխարհում չի կարող խախտել մեր դարավոր եղբայրության այդ ամուր կապը: Դուք ամեն ինչ արել եք և շարունակում եք անել, որպեսզի աշխարհի բոլոր ժողովուրդներն ապրեն խաղաղության մեջ, ապահով ու երշամիկ:

Կրկին անգամ հայտնում եմ իմ խորագգաց շնորհակալությունները Ձեր եղբայրական հրավերի և սիրավիր ընդունելության համար:

Խաղաղություն ամենեցուն:



Նորին Սրբություն Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոս վրաց օրթոդոքս եկեղեցու

**ՀՆԴԻԿ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄՍ ՄԱՏԹԵՈՍ ԱՌԱՋԻՆԻ ԽՈՍՔԸ**

Զերդ Սրբություն Վազգեն Ա. կաթողիկոս,

Զերդ Սրբություն Պիմեն Պատրիարք,

Զերդ Սրբություն Դավիթ Ե կաթողիկոս,

Զերդ Ամենապատվություն կարդինալ Վիլբրանդ,

Գերաշնորհ և պատվարժան եպիսկոպոսներ ու հյուրեր,

Երկար ժամանակ Մեր փայտայած ցանկությունն էր՝ այցելություն տալ

Հայաստանի մեր հարգարժան քոյր եկեղեցուն և տեսնել այն ակնհայտորեն հաջող առաջնորդության պատուիները, որ Նորին Սրբություն Վազգեն կաթողիկոսը տվել է Հայց. եկեղեցուն անցնող քան տարիների ընթացքուն:



Նորին Սրբություն Տ. Բամակոս Մար Թումա Մատթեոս Ա. կաթողիկոս հնդիկ մալարար եկեղեցու

Այժմ մեզ համար մասնավոր պատիվ է շնորհավորել Զերդ Սրբությանը՝ ս. Էջմիածնի հինավորց գահին Զեր բարձրանալու 20-րդ տարեդարձի կապակցությամբ:

Այս առթիվ բերում ենք Զեր Մեր անձնական եղբայրական ողջույնները և բարի մաղթանքները, ինչպես նաև բարեմաղթությունները մեր 12 թեմա-

կալ առաջնորդ եպիսկոպոսների, մեր ավելի քան հազար ծխական համայնքների և մեր մեկուկես միլիոն հավատացյալների:

Իբրև հետևանք այն իրողության, որ ս. Թովմաս առաքյալը քաջաքար հասավ այն ժամանակվա ծանոթ աշխարհի ամենահեռավոր անկյունները, մենք այսօր Հնդկաստանում պատիվն ունենք յունարիաբար կրկու Քրիստոսի ջահը՝ լուսն աշխարհի: Սակայն ճիշտ այն պատճառով, որ մենք այնքան հեռու էինք մեր քուր եկեղեցիներից, ս. Թովմասի գահը երկար ժամանակ մեկուսացած մնաց մոտ քրիստոնյա եկեղեցիներից: Այսօր այս տեխնիկական դարը և էկումենիկ շարժումը մեզ նորից իրար մոտ են քերել: Զերդ Սրբության այցելությունը մեր եկեղեցուն, ավելի քան տասը տարիներ առաջ, դեռևս հիշվում է որպես Հնդկաստանում մեր եկեղեցու վերջին շրջանի պատմության մեծ իրադարձություններից մեզը: Հաճակի է Սասունը, որ Մենք այժմ փոխադրձում ենք այդ այցելությունը՝ այսպիսով հայրապետական մակարդակի վրա ամրապնդելով այն սերտ կապերը, որոնք մեր երկու եկեղեցիներն իրար են միացրել Քրիստոսի մարմնի մեջ՝ սկսած մեր եկեղեցիների սկզբանավորության հնագույն ժամանակներից:

Այս երշանիկ առիթով թոյլ տվեք մի անգամ ևս շնորհավորել Զերդ Սրբությանը Զեր քսանամյա հայրապետության հանգրվանին և աղոթել Աստուծո, որպեսզի Զերդ Սրբությանը շնորհի շատ տասնամյակներ՝ հովվելու համար այս հինավորց քուր եկեղեցին, պարզելի Զեզ քաջառողջություն, յոր իմաստություն, նվիրյալ գործակիցներ և այն ամենը, ինչ անհրաժեշտ է արդյունավետ ծառայության՝ հովվելու համար այս եկեղեցին որպես Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց:

ԿԱՐԴԻՆԱԼ ՎԻԼԲՐՈՒՆԴՍԻ ԽՈՍՔԸ

Զերդ Սրբություն,

Սյցելի Էջմիածին՝ հայ եկեղեցու սուրբ քաղաքը, միշտ էլ խոր ուրախության մի առիթ է առաջին հերթին այն հայերի համար, որոնք ուխտի են գալիս այստեղ աշխարհի այն քուրո երկրներից, որ ձեր ծողովրդի շարժուն և գործունյա ողին կամ սիյուրքի պայմանները քչել-տարել են նրանց, ապա նաև մյուս ազգերի քրիստոնյաների համար, ինչպիսի եկեղեցական իշխանության էլ ենթակա լինեն նրանք:

Այս անգամ Պողոս Զ Պապը, որ մեծ սեր է տածում ձեր եկեղեցու նկատմամբ, մանավանդ Զերդ Սրբության այցելությունից հետո սուրբ քաղաք՝ Հոռոմ, առավել մեծ սիրով ընդունեց Զեր հրավերը՝ պաշտոնական մի պատվիրակություն ուղարկելու Էջմիածին՝ երկու կարևոր շարժադիմներով. առաջինը՝ սրբալոյս մեռնի օրհնության համայսավոր արարողությունները էին, և երկրորդը՝ Զեր գահակալության 20-րդ տարեդարձի տոնակատարությունը:

Սրբալոյս մեռնի օրհնությունը հոգաւոր մեծ նշանակություն ունի Եկեղեցու համար: Այս արարողության ամենանշանակալից կողմը գուցե նրա ներկայացրած կարևորությունն է Եկեղեցու միությունն արտահայտելու տեսակետից: Եկեղեցու պետի կողմից սրբագործված մեռնը եկեղեցական կենտրոնից տարվում ու քաջավում է քուրո թեմներին, քուր եկեղեցիներին: Այսպիսով հաստատվում և արտահայտվում է հոգևոր կենտրոնի կապը եկիսկոպոսի հետ:

Սրբալոյս մեռնը սահմանված է խորհրդակատարությունների համար:

Մեռունը Սուրբ Հոգով օծվելու նշանն է: Հունարեն «Քրիստ» բառը հիշեցնում է Քրիստոսին, որը Օծյալն է Աստոծ: Քրիստոս ծառայի կերպարանը ընդունեց՝ պահելով նաև ներք իր մեջ աստվածության լիիվությունը, և այդպիսով օծեց իր մարդկային բնությունը՝ լցնելով այն Սուրբ Հոգով:



Կարդինալ Ժամ Վիլբրանդ

Նա նոյն Հոգին փչեց իր առաքալների վրա՝ ասելով. «Սուէք Սուրբ Հոգին»: Նա տվեց Հոգին ամբողջ Եկեղեցուն Հոգեգալստյան օրը: Առաքյալներն այնուհետև շարունակեցին տալ այդ Հոգին բոլոր նրանց, ովքեր մկրտված էին: Այսպիսով, քրիստոնյան դառնում է Աստոծո օծյալը և մասնավոր կերպով միանում Քրիստոսին, որը Գերագույն Օծյալն է:

Սրբազնությունը, հետևաբար, դրոշմն է ոչ թե մի ինչ-որ օճման, այլ Սուրբ Հոգով օժման և ի Քրիստոս միության: Միանալով ի Տեր, քրիստոնակաները միացած են լինում միմյանց հոգենոր մի կապով, որը հանդիսանում է Եկեղեցու խորհրդակատարական իրականությունը:

Սրբազնությունը, հետևաբար, դրոշմն է ի Քրիստոս միության և Եկեղեցական միության:

Ահա թե ինչո՞ւ սրբազնությունն ի օրինակությունը մի տոն է ողջ Եկեղեցու համար: Այս պատճեռով է, որ Պողոս Զ Սրբազն Քահանայապետը սիրահոժար ընդունեց Զերդ Սրբության հրավերը՝ ուղարկելու մի պատվիրակություն, որպեսզի Աերկա լինի այս տոնակատարությանը և մասնակցի ձեր Եկեղեցու, Օրա Ավիրապետության ու Օրա Ժողովորդի որախությանը և մասնավորապես Զեր անձնական ուրախությանը, որպես հայ Եկեղեցու Հովվապետի:

Այսպիսով, ես արդեն գալիս ու կանգ եմ առնում այստեղ մեր Աերկատության երկրորդ շարժադիրի վրա. դա Զեր գահակալության 20-րդ տարեդան է, դա Զեր տոնն է, իբրև հայ առաքելական Եկեղեցու առաջին Հովվի:

Կցանկանայի այս առջիվ վկայակոչել մի քանի իրադարձություններ, որոնք պատմական կարևոր Աշանակություն են Աերկայացնում մեր երկու Եկեղեցիների հարաբերությունների մեջ և որոնք տեղի ունեցան քսան տարիների այս երկար ժամանակաշրջանի ընթացքում:

Ամենից առաջ դա այն փաստն է, որ Զերդ Սրբությունն ընդունեց Հովվ Սրբազն Քահանայապետի հրավերը՝ ուղարկելու դիտորդ-պատգամավորներով Վատիկանի Բ ժողովին: Այդ ժողովի տարրեր հաստերի ընթացքում հայ առաքելական Եկեղեցին Աերկայացվեց դիտորդ-պատգամավորներով, որոնք հանարավորություն ունեցան ձեր Եկեղեցուն հաղորդելու հավաստի տեղեկություններ մեր Եկեղեցու կյանքի, Օրա աստվածաբանական և հովվական վերածննդի մասին պատրիկա աշխարհում: Փոխադարձաբար մենք ևս հարատացանք այն զրոյցներով և գաղափարների փոխանակությամբ, որ ունեցանք ձեր դիտորդների հետ, որոնք շատ բան հաղորդեցին մեզ հայ առաքելական Եկեղեցու պատմության, ավանդությունների և արդի վիճակի վերաբերյալ:

Մեր երկու Եկեղեցիների միջև ստեղծված այս նոր հարաբերությունների ամենահանդիսավոր արտահայտությունն ու հաստատումը հանդիսացավ այն այցելությունը, որ Զերդ Սրբությունը, գալով սուրբ Էջմիածնից, տվեց Հովվի սուրբ քաղաքին: Ծրապատված ձեր Ավիրապետության մեծարգությամներով, ինչպես նաև Սովետական Հայաստանից և սփյուռքից Եկած քազմաթիվ հավատացյալներով, Զերդ Սրբությունը փոխանակեց խաղաղության համբուլը Նորին Սրբություն Պողոս Զ Պապի հետ՝ միասնաբար աղոթելով սուրբ Պետրոս առաքյալի գերեզմանի վրա: Սրբազն Պապի հետ միասին Ռուբ հրավիրեցիք «բոլոր քրիստոնյաներին և հատկապես կաթոլիկ Եկեղեցու և Հայաստանյաց առաքելական Եկեղեցու զավակներին՝ առավել հավատարմությամբ պատասխանելու Սուրբ Հոգու կոչին, որը մղում է Օրանց դեպի առավել խոր միություն, մեր բոլորի Փրկչի կամքի համաձայն, և որն առավել բեղմնավոր կդարձնի քրիստոնյաների ծառայությունը աշխարհին» (Համատեղ Հայտարարություն, Վատիկան, 1970 թ. մայիս 12):

Ես որպիս եմ այստեղ, այս պահին Աերկայացնելու Նորին Սրբություն Պողոս Զ Պապին և փոխանցելու Զեր Սրբազն Քահանայապետի անձնա-

կան ցանկությունները. «Գիտակից այն հշանակությանն ու կարևորությանը, որ ունեն այս կրկնակ տոնակատարությունները Ձեզ համար և ձեր եկեղեցու համար, Մենք բարձրացնում ենք Մեր աղոթքն առ Աստված, որպեսզի այս իրադարձությունները լինեն ուրախության և հոգևոր վերազարթունքի մի աղբյուր ձեր բոլոր հավատացյալների համար և մի առիթ՝ քրիստոնյաների միջև եղբայրական սիրո խորացման ու բարի կամքի տեր բոլոր մարդկանց միջև միաբանության: Արտահայտում ենք Ձեզ Մեր աղոթքի մեջ կատարած Մեր ջերմ մաղթանքը. թող այս հանդիպումը կարևոր մի հանգրվան հանդիպան եկեղեցական կատարյալ միության ճանապարհի վրա, հավատի և սիրո մեջ»:

Զերդ Սրբություն, այժմ թույլ տվեք ինձ Ուտրեխտի արքեպիսկոպոսի և Հոլանդիայի եպիսկոպոսաց ժողովի նախագահի իմ հանգամանքով, ավելացնել մի քանի անձնական խոսքեր: Մասատեխտի գլխավոր եկեղեցում յոթ տարին մեկ կատարվում են հանդիսություններ՝ ի արատիվ և ի հիշատակ չորրորդ դարում ապրած մի սուրբ եպիսկոպոսի, որը մասնակցել է Նիկիոն տիեզերական ժողովին և Սարդիկեի ժողովին: Նա եկեղեց է իմ երկիրը քարոզելու համար Ավետարանը: Նրա հիշատակը միշտ թարմ է մնում հոլանդացի կաթողիկ հավատացյալների մորքում, հատկապես Հոլանդիայի հարավում գտնվող Լիմբուրգ նահանգում: Նա կոչվել է Սերվացիոս և մեզ մոտ է եկեղեց Հայատանից: Այս տարի ես ուրախությունն ունեցա նախագահելու մեր Տեր Հիսուս Քրիստոսի այդ ծառայի պատվին կազմակերպված հանդիսություններին և աղոթեցի նոր հայրենի երկրի հավատացյալ ժողովրդի համար, ողջ հայ ազգի և ի մասնավորի Զերդ Սրբության համար:

ԼՈՒՐՈՒՄԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԵՐՍՎԱԴԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԷԼԻՍՈՆԻ ԽՈՍՔԸ

Զերդ Սրբություն,

Գերհարգելի եկեղեցական պետեր և Աերկայացուցիչներ,

Զերդ Վակենություն պր. Գասպարյան և հարգելի Աերկամեր.

Մենք մեծ շնորհ ենք համարում, որ մեր եկեղեցին ևս հրավիրեցիք Աերկա գտնվելու և մասնակցելու այս երկու մեծ հանդիսություններին: Այս առթիվ մեր շնորհակալությունն ենք հայտնում Զեր սրտարաց հյուրահրության համար:

Մեր Աերկայությունն այստեղ արտահայտում է սրտագին, երկարամյա ու ջերմ հարաբերությունը մեր երկու եկեղեցիների միջև: Մենք Լոնդոնի մեջ գնահատում ենք հատկապես մեր երկու եկեղեցիների միջև գոյություն ունեցող այս սերտ կապը: Ուրախ ենք հայրապետական պատվիրակ տ. Ներսես Եպիսկոպոսի Աերկայությամբ Լոնդոնի մեջ: Անգլիկան եկեղեցու համար մեծ համույթ և ուրախություն եղավ, անցյալ տարի, ընդունել Զերդ Սրբությանը Լոնդոնում, երբ եկեղեցիք օծելու ա. Պետրոս եկեղեցին:


Հափազանց ուրախալի է, որ Անգլիայում գոյություն ունի հայկական եկեղեցական մի համայնք, որն ապրում, գործում և աղոթում է քրիստոնեական եղբայրական ոգով:

Այս առիթը սակայն, Զերդ Սրբություն, մեզ համար ունի մասնավոր հշանակություն, երբ եկեղեց մասնակցելու Զեր գահակալության քանամյակին Բվիրված հանդիսությանը:

Զերդ բերում եմ հատուկ համակրությամբ և սիրով լեցուն շնորհավորացները Քենտրոնի արքեպիսկոպոսի և կարծում եմ դրանով արտա-

Բայտած լինել անգիկան ամրող համայնքի զգացումները՝ շնորհավորելով
Զեզ Ձեր գահակալության առիթով:

Անշուշտ ո՞չ մեկ նվեր կկարողանար արդարորեն արտահայտել մեր
հարգանքը Ձերդ Սրբության նկատմամբ: Այնուամենայնիվ մեզ համար հա-
ճելի է այս որակի առիթով Զեզ մոտ թողնել մի հիշատակ՝ արտահայտո-
թյունը մեր համակրության և հարգանքի:



Նորին գերաշնորհություն Ձերալդ Ազերսանդը Էլիսոն նպիսկոպոս Լոնդոնի

Վերջին ամիսներին մտահոգ էի և մտածում էի, թե ինչպես կարող եմ
հարմար և արժանավայել ձևով արտահայտել մեր համակրությունը և զգա-
ցումները Ձեր նկատմամբ: Եվ, որպես Լոնդոնի նպիսկոպոս, հիշեցի երկու

շենքերի մասին, որոնք փառքն են կազմում Լոնդոնի: Դրանցից մեկը Վեստմինստեր արքայարանն է, որի հիմնադրության 900-ամյակը հիշատակվեց 1965 թվականին: Այդ առիթով հատկապես պատրաստվեց հիշատակի մի ափսե, որ քիչ հետո ներկայացնելու են Ձեզ:

Բայց ինչպես Ձերդ Սրբությունը գիտե, Վեստմինստերի վանքը հասուկ տեղ ունի անգլիան եկեղեցու կյանքում: Այդ վանքը չի մտնում ո՛չ Քենտրոնի արքեպիսկոպոսի և ո՛չ էլ Լոնդոնի եպիսկոպոսի իշխանության ներքև, հետևաբար և Վեստմինստերից բերված մի հիշատակ բավարար պիտի չիներ արտահայտելու անձնաբառ մեր գացումները:

Լոնդոնի ս. Պողոս տաճարը, լինելով Մայր տաճարը իմ առաջնորդության սահմանների մեջ մտնող, միաժամանակ մեր եկեղեցու կյանքում ներկայացնում է մի հին ավանդություն: Թեև այդ տաճարը հիմնված է ավանդական շատ հին մի տեղի վրա, սակայն կանգուն տաճարի շենքը նոր է բաղդատամաք Էջմիածնի հմադարյան ձեր սուրբ տաճարի, որովենու հին շենքը այրվեց Լոնդոնի մեծ հրդեհի ժամանակ՝ 1666-ին, բայց անմիշապես վերաշինվեց Մեծն Քրիստովոր Ռումի միջոցով: Ուստի, ինչպես կարող էի լավագույնս արտահայտել իմ գացումները Ձերդ Սրբության նկատմամբ, եթե ո՛չ բերելով մի մասունք ս. Պողոս տաճարից, որ քիչ հետո պիտի հանձնեմ Ձեզ: Այն քարի մի բեկոր է՝ պոկված տաճարի հյուսիս-արևմույան աշտարակից, և ապա մետաղյա մի վարդ, որ գտնվեց ս. Պողոս տաճարի գմբեթի մեջ, երբ այն վերանորոգվում էր 1708 թվականին:

Այս առիթով միաժամանակ կցանկանայի հայր Մայր Մուրի կողմից հանձնել Ձերդ Սրբությանը ս. Պողոս Մայր տաճարի նկարը, ինչպես նաև պրես. Գիլբերտի կողմից, որը Անգլիայում ներկայացուցիչն է Քրիստոնեության ծանոթացման և տարածման գրասենյակի, գեղեցկորեն կազմված և զարդարված Աստվածաշնչից և աղոթագրքից մի օրինակ՝ այն խոստումով, որ մետաղյում առավել ևս օգտակար գրքեր պիտի կարողանանք ուղարկել ձեր ճեմարանի սաների համար:

Ներկայացնելով Ձեզ այս փոքր հուշանկերները, ողջունում և շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը որպես մի մեծ եկեղեցականի, որպես հանրաճանաչ մի անձնավորության, բայց այս բոլորից վեր, մանավանդ, որպես Սատուծ մի համեստ և սուրբ ծառայի և իր ժողովրդին նվիրված Հովվապետի:

ԲԵԴՐԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԳԵՐՄԱՆՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՄԱՂԻՄԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն,

Եկել եմ այստեղ իմ սիրտն որպահությամբ լեցում և մասնավոր հպարտությամբ ներկայացնելու իմ Տիրոջը և Պատրիարքին՝ Երուսաղեմի հունաց նորին Ամենապատվություն Բենեթիկոս Առաջինին, Ձերդ Սրբության գահակալության 20-րդ տարեդարձի այս հանդիսավոր առիթով:

Նախ և առաջ բերում եմ իմ Հայրապետի եղբայրական ողջունները, սրտագին շնորհավորությունները և լավագույն մաղթանքներն այս երջանիկ առիթով:

Բերում եմ միաժամանակ ջերմագին ողջունները Սիոնի, որ սուրբ Մայրն է բոլոր եկեղեցիների, գերիսարգելի Հայաստանյաց եկեղեցուն, որ Ձերդ Սրբությունը գլխավորում է Աստուծո շնորհով:

Իմ շերմագին աղոթքներով միանում եմ բոլոր հավատացյալներին և եղբայրներին ի Քրիստոս, որոնք ներկա են այստեղ, որպեսզի Զերդ Սրբությունն օրինվի և գահակալի երկար, քաջառող և բարգավաճ կյանքով՝ ի հոգևոր միսիթարություն ձեր ժողովրդի և ողջ Հայաստանյաց եկեղեցու:



S. Գերմանոս Մամայիս միտրոպոլիտ

Եվ Մովսեսի նման, որ Սինա լեռան կատարը բարձրացավ և բարձրացրեց իր ձեռքերը, որպեսզի ապրի Խորակելը (Եվհ ԺԷ 11), Զերդ Սրբությունը ևս թռի լինի միշտ իր հայրապետական գահի վրա և բարձրացնի Իր ձեռքերը, որպեսզի ձեր ազգն ու եկեղեցին հաղթանակեն և ապրեն շատ ու շատ օրինված տարիներ խաղաղության, շինության և անսահման մեջ: Ամեն:

ԵՐՈՒՍՂԵՄԻ ՖՐԱՆԶԻՍԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԿՈՒՍՈՌ ՀԱՅՐ
ՄԱՌԻՐԻԼՈ ՍԱԿՎԻ ԽՈՍՔԸ

Զերդ Սրբություն,

Մենք, իրեն Ֆրանչիսկան միաբանության անդամներ, որ ովհս ենք արել ապրելու խոնարհության և աղքատության մեջ, Զեր այս տոնին բերել ենք մեր սիրուն ու աղոյքը:

Մեծապես շնորհակալ ենք Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե պատրիարքի միջոցով մեզ եղած այս սիրավիր հրավերի համար:

Հայ հավատքի կենտրոն սուրբ Էջմիածնում տեղի ունեցած սրբալոյս մեռնի օրինության և Զերդ Սրբության գահակալության քանամյակի առթիվ կատարված հանդիսությունները, ինչպես նաև մեր ովհսագնացությունները դեպի հայկական պատմական վաճեքերն ու եկեղեցիները մեզ համար եղան կրոնական ապրումների և հոգևոր նոր փորձառության թանկագին առիթներ:

Մենք այսուել խորապես տպավորվեցին մանավանդ տեղի ունեցած եկեղեցական վեհաջորդ արարողություններից և հայ ժողովրդի ցուցաբերած քրիստոնեական հավատքից ու նրա բարեպաշտիկ ապրումներից:

Մենք Երուսաղեմում շատ սերտ հարաբերության մեջ ենք Հայաստանյաց առաքեական եկեղեցու հետ, որովհետև Երուսաղեմի հայոց պատրիարքության, ինչպես նաև հովյան պատրիարքարանի հետ բաժանում ենք սուրբ Տեղյաց պատասխանատվությունը և մանավանդ Գրիստոսի ու Հարության տաճարի պաշտպանությունն ու ծառայությունը:

Մենք երջանիկ ենք մանավանդ քրիստոնեական եկեղեցու մեջ գոյություն ունեցող այն հազվագյուտ իրողության համար, որ ու Հարության նոյն տաճարից ներս. մենք՝ երեք քոյլ եկեղեցիներս, միասին ենք աղոյում, միասին ենք երգում և միասին ենք փառք տալիս Աստծուն:

Հայ եկեղեցու հնադարյան այս սրբավայրում մենք աղոյեցինք ձեր եկեղեցու նվիրապեսության, ձեր հավատացյալ ժողովրդի, բայց մանավանդ դարերից եկող ձեր ազգի համար:

Ժողնեղուց առաջ աստվածաշնչական այս երկիրը՝ Զեզմից մի շնորհ ունեմ խնդրելու. որ բարեհանձեք տալ ինձ և իմ միաբանակից Երայններին Ձեր օրինությունը, որպեսզի ո. Գրիգոր Լուսավորչի Շերկայությամբ և մեր միաբանության հիմնադիր ու Ֆրանտուա Դ'Ամիզի առաջնորդությամբ կարողանանք պահել քրիստոնեական հավատքը մեր եկեղեցիներից ներս ի փառ Աստուծո և ի հարգանս սուրբ Աստվածամոր. ամեն:

Երևանի ո. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանի տեսչության, գիտական խորհրդի և ողջ անձնակազմի անունից շնորհավորանքի հետևյալ ջերմ խոսքն ընթերցեց Մատենադարանի տնօրեն Անն Խաչիկյանը.

ԵՐԵՎԱՆԻ Ս. ՄԵԽՐՈՊ ՄԱԶՏՈՅԻ ԱՆՎԱՆ ԶԵՐԱԳՐԱՑ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՎՈՐԵՆ ԼԵՂՈՆ ԽԱՇԻԿՑԱՆԻ ՈՂՋՈՒՑՆԻ ՈՒՂԵՐՁԸ

**Զերդ Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց.**

Վեհափառ Տեր,

Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինությունը և գիտական ոռջ անձնակազմը Զեր գահակալության արդյունավետ քանամյալի և ազգանվեր լայն գործունեության առիթով չերտորեն շնորհավորում են Զեզ և ցանկանակում առավել բարեհաջող և առավել բեղմնավոր նոր քանամյակներ:

Մենք հպարտությամբ նշում ենք, որ Զեր Վեհափառությունն այսօր, բազմած Սահակ Պարթև, Ներսես Շնորհալի, Ներսես Աշտարակեցի, Խրիմյան Հայրիկ, Գևորգ Վեցերորդ երջանկահիշատակ Կաթողիկոսների գահին, շարունակում է կյանքի կոչել ազգօգուտ նույն ավանդները և ընթանալ հայունանվեր գործունեության նույն մայրուղիով:

Ծակատագրի բերումով Զեզ և Զեր նախորդներից շատերին վիճակվել է հոգալ ոչ միայն մայր հայրենիքում բնակվող, այլև նրա սահմաններից դուրս օտար հորիզոններում պատապարված հայության հայունաբարձ զանգվածների հոգևոր պետքերը և համախմբել նրանց հայրենի երկրի, նրա մշակույթի սրբազն ավանդների շուրջ: Հանրահայտ է, Վեհափառ Տեր, որ այս առումով շատ մեծ են Զեր ծառայությունները: Սփյուռքահայությանը շնորհած Զեր այցելությունները հիրավի եղել են կենսապարզն: Դուք ամենուրեք ոտք եք դրել որպես վերածնված Հայաստանի և ազատագրված հայ ժողովրդի երջանկ առաքյալ՝ հպատակ ունենալով սփյուռքահայության բոլոր հանգրվանները կապել Սովետական Հայաստանի նվիրական հող ու շրին և լուսավոր առօրյային:

Մեր նախնիները կերտել են մշակութային հոլակապ հուշարձաններ, որոնք ամենուրեք արժանացել են անվերապահ գնահատության: Հայու ալյում, մեր սրբազն պարտքն է՝ աչքի լուսի պես պահպանել հայ մշակույթի՝ մեզ ավանդված անգնահատելի մասունքները և սրբությամբ փոխանցել գալիք սերունդներին: Դուք, Վեհափառ Տեր, այս ուղղությամբ ևս բեղմնավոր աշխատանք եք տարել՝ պաշտպան կանգնելով և նոր կյանք պարզնելով հայունայց հիշատակներին: Հանրահայտ են Զեր ջանքերով իրականացած էջմիածնի Մայր տաճարի մեծածավալ նորոգումները, նրա ներքին և արտաքին բարձրաճաշակ հարդարումը, Վեհարանի շքեղ սրահներում արվեստի նոր թանգարանի ստեղծումը, ինչպես նաև պատմական ու մշակութային մեծարժեք բազմաթիվ հուշարձանների վերակենադրանացումը:

Մենք, Մաշտոցի անվան Մատենադարանի ներկայացուցիչներս, խորին երախտագիտությամբ ենք արձանագրում այսօր հին ու միջնադարյան ձեռագրերի հավաքման և պահպանության ուղղությամբ Զեր ծավալած նպատակադիր ու արդյունավետ գործունեությունը, որն արտահայտվել է Մաշտոցի անվան Մատենադարանին մեր մշակույթի տասնյակ մեծարժեք հուշարձանների նվիրաբերությամբ, որոնց մեջ հատուկ հիշատակության են արժանի Զեր սիրելի մոր անունը հավերժացնող Ավետարանը և Թորոս Ռուպինի բարձրարվեստ մանրանկարներով զարդարված ձեռագրերը:

Դրվագելով Զեր հայրենանվեր գործունեության արդյունքները, չենք կարող այսօր չինչել, որ դրանք արգասավորվել են աշխարհի խաղաղության պայմաններում: Հայ ժողովուրդն առավելագույն գիտե գնահատել

խաղաղությունը, որին այնքան ծարավի է եղել դարերի ընթացքում: Այս ճշմարտությունը Զեզ քաջ հայտնի է: Այդ չէ՝ պատճառը, որ Դուք իրապես աշխարհի շատ բեմերից արտասանեցիք Զեր ազնիվ «Խաղաղութիւն ամենցուն»-ը: Ահա թե ինչո՞ւ, Վեհափառ Տե՛ր, Դուք արժանի եք կրկնակի մեծարման նաև խաղաղության պահպանության գործին բերած Զեր հետևողական ջանքերի համար, որը բարձր է գնահատվել սովորական պետության կողմից և նշանավորվել Զեզ տրված կատավարական պարգևներով:

Ընդհամենը քանի տարի... բայց անմնացրող նվիրաբերման որքան եռանդ, ինչպիսի մեծարժեք արգասիքներ, ի՞նչ մնայուն կոթողներ...

Ի լրումն քանից մերոց սակաւոց կամիմք ըստ լեզուին նախնեաց մերոց ի գիր արձանացոցանել, եթէ, արդարն, բազում են երախտիք Զերդ Վեհափառութեան, որք շնորհաւարտ կացուցանեն զազգս հայոց ի սիհիս աշխարհի: Կետ նպատակի կենաց Զերոց և համայնից գործառնութեանց կայր և մնայ յաւերծ պահպանութիւն մտաւոր և ոգեղեն զանձոց մերոց հայունեաց: Եւ գործութեամբ սրտի հաստատեմք, եթէ յայս յամենայնի ոչ ինչ ունիք զպարտիս հատուցման առաջի ժողովրդեանն. զոր ինչ արարեալ էք, յաելեա և լիով:

Առ այս, բոլորով սրտի բարեմաղթեամք Վեհափառութեանդ Զերում քաշառողջութիւն և արևշատութիւն ի յամայր անս և կատարեալ լրումն համօրէն ըղձից և նպատակաց Զերոց:

Ի դիմաց տնօրէնութեանն Մաշտոցեան Մատենադարանի՝

Լ. Ս. ԽԱՉԻԿԵԱՆ

Գրեցա ի թուականութեամս հայոց ՈՆԻՒՅ,

Յամենամն սեպտեմբերի ԻՆ, օրն Բ-շաբթի:

Սիյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազապայանը, հանուն կոմիտեի նախագահության, նույնպես շերմորեն ողջունեց և շնորհավորեց Հայոց Հայրապետին հետևյալ հոգիչ ուղերձով.

ՍՓՅՈՒՐԺԱՑԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՎԱՐԴԳԵՍ ՀԱՄԱԶԱՊԱՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Ամենայն Հայոց Մայրագուն Պատրիարք և կաթողիկոս,
Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջին Հայրապետին

Զերդ Սրբություն.

Սիյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահությունը ջերմորեն ողջունում է և ի սրտն շնորհավորում Զեզ այս համեյսավոր օրվա առջիվ:

Զեր բազմաբեղուն և արգասավոր գործունեությունն այս քանի տարիների ընթացքում, Զեր բոլոր ջանքերը, անսպառ եռանդը, բազմակողմանի ու խոր իմացությունը ի սայս են դրվել հայրենանվեր նպատակների, ազգօգուտ գործերի:

Հատկապես մեծ է այն ավանդը, որ Զերդ Սրբությունը ներդրել է աշխարհասիյոտ հայությանը մայր հայունների շուրջը համախմբելու, նրան վերածնված հայրենիքի նվաճումներով ու հետանկարներով ոգեշնչելու գործում:

Մենք Զեզ ճանաչում ենք որպես աշխարհի խաղաղության, ժողովուրդ-

Աերի բարեկամության ու համակեցության շատագովի, մարդասիրական այդ մեծ գաղափարների շերն ու համատափոր պաշտպանի: Սովետական կառավարությունն ըստ արժանվույն գնահատելով խաղաղության գործի մեջ Զեր Աերդրած ազնիվ ջանքերը, Զեզ արժանացրել է կառավարական բարձր պարզի՝ «Պատվո նշան» շքանշանի:

Գոհունակության խորին զգացումով պիտի նշենք նաև Զեր այն ջանքերը, որ Դուք Աերդրել եք մեր պատմական հուշարձանները պահպանելու ու վերականգնելու, հայ ժողովրդի հոգևոր մշակութի ցրված բնելորներն ի հայու բերելու, հայրենադարձելու և հայրենի ժողովրդի սեփականությունը դարձնելու գործում:

Դուք անսպառ եռանդով սատարել եք սիյուռքի մշակութային կյանքին, հովանավորել ուսումնական հաստատությունների գործունեությունը, Զեր խոսքով ու գործով ձգտել եք սիյուռքահայության հոգում միշտ վառ պահել հայրենասիրության ազնիվ կրակը:

Մեր կոմիտեի ստեղծման հենց առաջին օրվանից Դուք հանդիսացել եք նրա վարչության անփոփոխ անդամը և Զեր նպաստը բերել նրա գործունեությանը:

Զերդ Սրբություն, կրկին անգամ շնորհավորելով Զեզ, մաղթում ենք քաջառողջություն, անսպառ կրորով և նորանոր հաջողություններ Զեր հայրենանվեր գործունեությանը:

ՍՓՅՈՒՌԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի գահակալության քսանամյակի առիթով ստացվել են բազում շնորհավորական հեռագրեր և գրություններ, որոնցից երկուսը հանդիսության ժամանակ հրապարակեց ա. Շահն արքեպիսկոպոս Աճեմյանը, այդ թվում՝ Սովետական Միության Մինիստրների սովետին առնելու կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ Վ. Ա. Կուրոյեղովի շնորհավորական հեռագիրը, որը կրում էր 27 սեպտեմբեր 1976 թվականը (Սույն հեռագիրը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 11):

Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Ալեքս Մանուկյանը նաև իր 26 օգոստոս 1976 թվակիր սրտառուց հետևյալ նամակով շնորհավորում էր Հայոց Հայրապետի գահակալության քսանամյակը.

ՏԻԱՐ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

Ն. Ա. Օ. Տ. Տ. Վազգեն Ա. կաթողիկոս Ամենայն Հայոց

Ա. Էջմիածին, Հայաստան

Վեհափառ Տեր,

Ահա հանդիսավոր ու հոգևորով առիթ մը ևս կատեղծվի համայն հայ ժողովուրդին համար, և աշխարհի բոլոր ծագերեն խումբ-խումբ հայեր կիրութան սուրբ Էջմիածին՝ մասնակցելու համար Նորին Սուրբ Օծությանդ գահակալության քահանայակի տոնախմբության:

Վերջին երկու տասնամյակներուն Հայաստանաց եկեղեցվու պատմու-

թյունը պայծառացավ Զեր անձին լուսով. Զեզնով սուրբ Գրիգոր Լուսավոր-չի դարավոր Աթոռն ունեցավ արժանավոր գահակալ մը, իսկ սուրբ Էջմիած-նի մայրավանքն ապրեցավ վերելքի, շինարարության ու վերահաստատվող փառքի նոր շրջան մը:

Զեր Շեշշնչյալ և վարչագետ անձին մեջ հայրենի ծողովորդը հաստա-տեց սուրբ Էջմիածնի հեղինակության բարձրացրւմը և անհուն սիրով ու խոր հարգանքով կապվեցավ Զեզի: Մեզի համար երջանկություն եղած է միշտ հաստատել, թե համատարած հարգանքի և համակրանքի խորհրդանիշ մը կհանդիսանա Վեհափառությանը անոնը մայր երերի ծողովորդին համար:

Զեր գահակալության տարիներուն ոգի և շունչ ստացան մեր հինա-վորց վանքերն ու եկեղեցիները. Զեր հոգածու միտքն ու շինարար ճիգերն ավերակներն վեր բարձրացրցին մեր ճարտարապետական գեղեցկությանց վեն կառուցներն շատերը և կենդանությամբ ու հապարտությամբ վերա-կանգնեցին զանոնք իրենց պատմական փառքին մեջ:

Մեզի՝ սիյուռքահայերուս համար կենարար իրողություն մը հանդիսա-ցավ Վեհափառությանը գահակալությունը, որովհետև Դուք գիտցար հասնի յորաքանչյուր սիյուռքահայու և օծել անոր հոգին Էջմիածնի լուսով. Զեր աստվածառության շնորհներով բաշխվեցաք բոլորին անձամբ այցելելով, տար-բեր գաղութներ կամ Զեր պատգամն ու շունչը հացնելով մինչև հեռավոր անկյուններն աշխարհի:

Այսօր, հայությունն ամենն ավելի տարածված է ի սիյուռք աշխարհի, սակայն, նոյն ատեն, ավելի ուժգին կապված է Մայր Աթոռ ու Էջմիածնին, որովհետև Կենդանի հաղորդակցության մեջ է անոր հետ, առավելաբար Զեր շինարար և առաքինազարդ անձին ընդունեցնելու:

Սուրբ Էջմիածնին մեր հավատքի կովանը հանդիսացած է բոլոր դա-րերուն ընթացքին, և այսօր շեն ու պայծառ վերականգնումը մեր սրբ-տերը կեցնել երեկությունը և հապարտության անապատ աղբյուրներով: Պատ-մության բախտավոր մեկ դիպվածով Մայր Աթոռի վերելքի այս հանգրվա-նին գահակալու կոչեցավ Զեր, Վեհափառությունը, որ առավելագույն շքեղանքով բոհշք մը տվակ այդ վերելքին:

Մենք կասկած չունինք, որ մեր եկեղեցվո պատմությունը Զեր իշխա-նության տարիները պիտի նվիրագործն Զեր անունով և պիտի կնքե զանոնք Զեր շնորհալի անձին դրոշմով. Զեր իշխանության տարիները պիտի անց-նին պատմության իրքն Վազգեն Առաջին Շինարար Հայրապետի ժամանա-կաշրջան:

Զեր գահակալության հանդիսավոր առիթով ամբողջ աշխարհի հայու-թյան սիրտերը կցնենք Զեզի հետ. ամեն հայ մասնակից կրտանա Մայր Աթոռի նվիրական կամարներուն տակ կայանալիք հոգեպարար հանդիսու-թյանց:

Այս առնչությամբ հավանաբար ամեն հավատավոր հայու հոգվուն իդենքը խուացուցած կըլլանք մեր ողջունի այս սրտագին գիրին մեջ, եթե Զեզի մայթենք երկար, արևշատ ու երջանիկ տարիներ: Քան տարի Զեր շնորհառատ անձով խորհրդանշվեցավ մեր սուրբ եկեղեցվո պայծառությու-նը. ու քանի վառ ու կենսուրակ մնա Զեր, Վեհափառությունը, կենդանի ու շեն պիտի ըլլա մեր եկեղեցին:

Հայու մեր անհատն ապրումներու խորերեն սրտագին կշնորհավորենք Նորին Վեհափառությունը, ցանկալով Զեզ երկար ատեն տեսնել սուրբ Գրի-գոր Լուսավորչի պայծառ գահուն վրա:

Որդիական խորունկ ակնածանոք՝

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Նախագահ

Խաղաղության պաշտպանության Հայաստանի հանրապետական կոմիտեն նույնական հեռագրով շնորհավորել էր խաղաղության չերմ պաշտպան Հայոց Հայրապետի գահակալության քանամայակը.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ
ՊԱԾՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ**

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին.

Հայաստանի Խաղաղության հանրապետական կոմիտեն չերմագին շնորհավորանքներ է նոյն Ձեր արգասավոր գահակալության 20-ամյակի առթիվ։

Ձեր բազմաբեղուն գահակալության ընթացքում Դուք հանդես եք եկել որպես խաղաղության պաշտպանության չերմ շատագով։ Ձեր հայրենաշունչ խորը լայն արձագանք է գտել բարի կամքի տեր մարդկանց շրջաններում, արժանացել միահամուռ հավանության։ Մենք բարձր ենք գնահատում Ձեր մասնակցությունը խաղաղության պաշտպանության բոլոր ձեռնարկումներին, ինչպես նաև խաղաղության ֆոնին ի հայատ Ձեր բերած օժանդակությունը։

Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, նորանոր հաջողություններ Ձեր հայրենանվեր գործում հանուն կայուն խաղաղության հաստատման հիմաւորց ու նորոգ մոլորակի վրա։

**ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱԾՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**

Երևան, 27 սեպտեմբերի 1976 թ.

Աշխարհահոչակ երաժիշտ և կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը, շնորհավորելով Վեհափառ Հայրապետի գահակալության քանամայակը, իր 27 սեպտեմբեր 1976 թվակիր հեռագրում գրում էր.

«Թանկագին Վեհափառ,

Ձեր գահակալության 20-ամյակի առիթով ընդունեցեք իմ սրտագին շնորհավորանքը և բարի մաղյանքները։

Ցանկանում եմ Ձեզ հետագա հաջողություններ Ձեր գործունեության ասպարեզում ինչպես բոլոր հայերի համախմբման, այնպես էլ ժողովորդների միջև խաղաղության և բարեկամության համար մղվող Ձեր ազնիվ աշխատանքում։

Խորին հարգանքներով՝

Ա.ՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ»:

Վեհափառ Հայրապետի գահակալության քանամայակին նվիրված հանդիսավոր հիմնարար ավարտին տ. Շահն արքեպիսկոպոսը հրավիրեց հորելլար Հայոց Հայրապետին։ Իր հորելլանական խորը ասելու այս առթիվ։

Ողջ դաჩլիճը հոտնեկայս մի անգամ ևս ցնծագին ծափահարություններով ողջունեց Հայոց Հայրապետին։

Նորին Սուրբ Օծությունը, խորապես հոգված համագգային այս հանդիսավոր արտահայտություններից, ողջունեց Անրկայությունը բոլոր հյուրերի և հրավիրյալների բովանդակալից ու տպավորիչ մի ճառով (Վեհափառ Հայրապետի ճառը տես «Էջմիածին» ամսագրի սովոր համարում, էջ 3):

Ժամը 14-ին ավարտվեց Հայոց Հայրապետի գահակալության քաւանամյակին նվիրված հորելյանական համեմատությունը խանդավառ ու սրտագին մթնոլորտում:

